

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. ՀԻՐԵ — Լեզուն փողոց

ՄՈՒԴԱԹԻՎԱՄԻ ճիշդ դիմաց

Pour les annonces s'adresser

à la Rédaction du Journal PHAROS

LE CAIRE — RUE ABDIN

vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

Մէկ անգամի համար տողը 3 Դր. ողջ  
Մէկ անգամէ աւելի ծանուցումներու հա-  
մար մասնաւոր պայմաններ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՄԻՊՈՍԻ ԶԱՄԱՐ

|                     |               |
|---------------------|---------------|
| Տարեկան . . . . .   | 7. 2. ողջ 100 |
| Վեցամսեայ . . . . . | » 55          |
| Եռամսեայ . . . . .  | » 30          |

ՕՏԱՐ ԵՐԽԻՆՆԵՐՈՒ ԶԱՄԱՐ

|                     |        |
|---------------------|--------|
| Տարեկան . . . . .   | Ձր. 26 |
| Վեցամսեայ . . . . . | » 14   |

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՆՈՒՄ

Ո ԵՒ Է ԴՐՈՒԹԻՒՆ



# ՓԱՐՈՍ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԵՆԳՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր — Յ. ԱԼՓԻՍԻ

Արքահայր ԻնգիւստիՍ ԱՐՔԵՊԻՍ-  
ԿՈՊՈՍ ԿԻՒՐԵՂԵԱՆ և ՄԻԹԱՐԵԱՆԵՅ  
ՄԻԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ, նաև յանուն ՏԻ-  
ԱՐ ՍԵՐՈՎԵԼ Մ. ԱԼԻՇԱՆԻ և ԻՐ ՔԸ-  
ՐՈՋ, ցաւ ի սիրտ կը ծանուցանեն  
զանգարման ի կորուստն յանձին՝

## ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ

ՄԻԹԱՐԵԱՆ ՈՒՒՏԵՆ

Ա.Ռ.ՈՒՍԱՆԱՄԱՆ ՄԻԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԵՈՅ ՂԱՅԱՐՈՒ

որ յանգեաւ ի Տէր, այսօր Ուրբաթ  
առաւօտեան ժամը 6ին, յետ կար-  
ճատե հիւանդութեան և ընդու-  
նելոյ զՍուրբ Խորհուրդս Եկեղեց-  
ւոյ, ի հասակի 81 ամաց :

Գրանը հինգ տարիներէ ի վեր  
Աթուակալ Միաբանութեանս, Հայր  
Ալիշան՝ տիպարն էր ամեն առաքի-  
նութեանց :

Երկար ժամանակ անսովորաւ և ե-  
ռանդագին կերպով Ուստիս կարե-  
ւոր պաշտօններու մէջ գտնուելէ զինի  
քաջած էր ի Վանս Սրբոյն Ղա-  
զարու ինքզինքը նուիրելով մենակ-  
եացութեան և քրիստոնէական  
պաշտամանց :

Պատուակալ անդամ Վենետիկոյ  
Գիտութեանց և Գեղարուեստից ար-  
քայական Կաճառին, Իտալիոյ Ասի-  
ական Ընկերութեան, Ս. Բէթէրգ-  
պուրիի և Մոսկուայի հնախօսական  
կայսերական Ընկերութեանց, պաշ-  
տօնակալ՝ Բարիզու գիտութեանց և  
գալութեանց Ակադեմիայի, պատուա-  
կալ վարդապետիէնաի փիլիսոփայա-  
կան համալսարանին, աստիճանաւոր  
Օսմանիէ և Մէհմետիէ պատուսնչան-  
ներուն, Հայր Ալիշան՝ իր կեանքը  
նուիրած էր հայկական ուսումնա-  
սիրութեանց :

Իր պատմական և մենագրական  
հոյակապ աշխատութիւնները ժամու-  
նակակից Հայ գրականութեան ան-  
մուանալի յիշատակարանները պիտի  
ըլլան :

Իբրև ազգային բանաստեղծ իր  
համբաւը և ժողովրդականութիւնը  
կէս դարէ ի վեր տարածուած է  
ամբողջ Հայաստանէ մէջ և իր ա-  
նունը յաւէտ սիրուած և յարգուած  
պիտի մնայ ամեն հայու սրտին մէջ :

Վենետիկ ի Ս. Ղազար  
22 Նոյեմբեր, 1901

ձիւղ այս պահուստ տալու յայտնա-  
բերուած ազգային ընդհանուր սուգի մը  
գոյժը կը բերէ Ասորիականի եզրերէն  
Միթարեան Հարք, իրենց պանծալի  
յորեղեանին պատճառած ցնծութեան օրե-  
րուն մեջ տակաւին, յանկարծ անազոնայ  
կերպով սրտաբեկ կ'ըլլան Ուրբաթեան  
կը յաջորդէ թախիծ և ժպիտներուն՝ ար-  
տասութիւն :

ԱԼԻՇԱՆ մեր պաշտուած նահապետը,  
զարուս մեծագոյն Հայերէն մին, սիրուած,  
յարգուած մեծ ծերունին Ալիշան, մեր մէկ  
հատիկ Ալիշանը ոչ եւս է :

«Անգարմանի կորուստ» բացատրու-  
թիւնը որ այնքան անգուշուկութեամբ սո-  
վոր ենք գործածել ասոր կամ անոր մահ-  
ուան առթիւ, զրին վարժութեամբ եւ կամ  
նուիրագործեալ բացատրութիւն մը քնե-  
լու նպատակաւ, երբէք այնքան ճշգրիտ  
կերպով չէր պատկերացուցած պարագայ  
մը, վիճակ մը զոր հայութեան մէջ կ'ը-  
տեղէն այսօր մահը այդ հոյակապ բանա-  
տեղծին, անդուգական պատմագէտին եւ  
մեծ հայերեսներին :

Ազգային ընդհանուր սուգ մըն է այս  
որուն գոյժը պիտի խոցէ անխոր առն  
հայու սիրտ :

Այս ապաւորութեան տակ գտնուելով  
նաեւ մինք, թող ներուի մեզ եթէ այսօր  
կը բաւականանանք այս հակիրճ տողերը  
նուիրելով ԱՆՈՐ յիշատակին եւ կը փո-  
թանք մեր ճշմարիտ ցաւակցութեան եւ  
խորին անհամբեր արտայայտութիւնը  
ներկայացնել Կիւրդեան Արքա՛հօր եւ Մը-  
թիթարեան ամբողջ Ուստիին :

Հետեւեալ սիրուն յօդուածը մեզ զը-  
կածէ արտասահմանէն շատ սիրուած և  
անուն ունեցող մեր գրագէտ բա-  
րեկամներէն մին որ գեղեցիկ կնկան  
մը պըրանքով, ծածկանուան քօղին  
տակ կուզէ պահուելու, խոստանա-  
լով սակայն յաճախ տալ մեզի լա-  
ւագոյնները իր արտագրութիւննե-  
րուն :

## ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

—Նաբոլէոնէն՝

Վաթառնոց ծերունի մըն էր չորի չոր,  
խանձոտած կրեւին մաշկը արեւին տաքէն  
ու բոլոր հովերուն ազդեցութիւնէն քրիկ  
քրիկ : Սայլակին մէջ անիկա կը գտնար  
խենդի պէս, քուրջերն ու բուրդէ կապա-  
ններ թոթուելով շարունակ, մատները դի-  
ւային արագութեամբ ու մոլեգին տենդով՝  
պտտեցնելով գոտիին ծալքերուն մէջ, վը-  
րան գլուխը, գրպանները, երբեմն մինչեւ  
մազերը, որոնց ցանցաւ թելերը կը գա-  
լարէր փետուրէն աստիճանս Ու բոլոր իր  
այս շարժումները, ոստումները, մկանկը-  
կումները ընդմիջուած նուագաւոր ու  
խորունկ ողբով մը :

—Նաբոլէոնէն՝

Վեր կ'ելլային սայլակներուն կրկին տո-  
ղանցումին մէջէն Գոմէշները, սեւ լայնե-  
րախ դունչներին դուրս ցցած, մանր աչ-  
ուներուն ձերմկուցը ողորմագիտօրէն գը-  
լորելով կը հեւային հակա փքոցներու  
պէս. ձիերը, յոգնած դադարած, ճամբուն  
փոշին կը թնդէին իրենց տաք սմբակնե-  
րովը, ու խեղճ եղները, լուծին տակ ճիւղ  
ճիւղ փակած, կը ծաւիլին անդու՛լ՝ անուշ  
նայուածքին տարտամօրէն աստանդա-  
կան : Ու սայլակները, հոծ, անվերջ,  
հունցեցողով բռնաւոր, զառթափին եր-  
կու կողմը ափափոյ պատնէշներ կը ձե-  
ւացնէին, որոնց վրայ հողագործին լաճե-  
րը կը հակէին մրափելով : Ամբողջ տար-  
ուան մը անպարագրելի դատանքի այդ  
արգասաբերութիւնները, ձիեր ու քրտին-  
քի շաղախ, հեւքի ու տքնութեան խոր-  
հորդանշան, կ'անշարժանար հող, օդու-  
տոսի հրատապ արեւին տակ : Յանկարծ  
ողորմագին ճիւղ վերակաւ :

—Նաբոլէոնէն՝

Մօտը, ծերունին, չոր, արեւակէզ, ոսկե-  
րաթեք, սայլակին մէջ կը շարժուէր, կը  
ցատկոտէր, քուրջերը թոթուելով մոլեգ-  
նօրէն աչքերը խորը մոլոր, շնչաւոր, խե-  
ղագար : Օրհասական անձկանքի այդ ա-  
ղիւթաւ տեսարանը մարդիկ հաւաքեց  
իր շուրջը, որոնք սկսան հարցնել .

—Մարդո՛ւկ, ի՞նչ կորսնցուցիր . . . քա-  
նի՞ ոսկի :

—Նաբոլէոնէն՝

Ժամանակ չունէր պատասխանելու եւ  
հարցման մը աղապատանքն ըմբռնելու,  
հէք խելակորոյս ծերունին : Եւ անդադ-  
րում սայլակը կը յեղաշրջէր, գրեթէ ա՛լ  
պարելով, թեւերը վեր, նայուածքը հոգե-  
վարքի առկայծումով, իր հարստութեան  
անակնկալ ու անկարելի փճացումին մը-  
տածումէն այսահարուած :

—Խեղճ մարդ, խելքին դպեր է, կը  
մրմնջէին ամբողջին մէջ ուր սայլակը կը  
չըլլապատէր՝ հիւանդ ու անօգուտ հետա-  
քըրքութեան մը մոլուած :

—Գեղացին մէկէնիմէկ դադարեցաւ ցատ-  
քելէ ու զիմացը նայեցաւ, առաջին ան-  
գամ հանդիպած մարդուն :

—Ա՛յ գողացաւ պողաց, անգիտակից  
ու գահավէժ մղոմներէն մէկովը խելա-  
գարին, որ իր չիկաւառ երեւակայութեան  
մէջ ամեն մարդու վրայ ոճրի մը կարմը-  
րութիւնը կը տեսնայ :

Եւ աչքերը մանր կըլոր, արեւնոտ, օր-  
հասական անշարժութեամբ գամուած մը-  
նացին երեսին վրայ այն մարդուն զոր  
անիրաւօրէն իր կողպատիչը կը հռչակէր :  
Իսկոյն մտքին առջեւ պարզուեցան  
գիւղացիին կեանքին, խաւարչուտ եւ ա-  
հեղօրէն միօրինակ կեանքին կարծր զըր-  
ուագները, զորս քանի մը ոսկիի կորուս-  
տի աննախնթաց պարագան այդպէս երե-  
ւան կը հանէր մերկապարանոց անարկու-  
թեամբ : Տարին համբուն — վերջինը անոր  
ապրած բոլոր համանման տարիներուն —  
հողին հետ, ջուրին հետ, օդին հետ, բո-

լոր տարրերուն կատաղի քմահաճոյք-  
ներուն հետ ծեծկուած մաքառած էր բո-  
վանդակ զողջունն եւ շիջելամբռ կորո-  
վովը իր վտիտ, գօս բազուկներուն, ո-  
րոնք՝ քանի մը ոսկիներու մոգական հե-  
ռանկարին սաղարանքին տակ հերկած, ցա-  
նած, քաղած, համարած եւ իր քրթնա-  
թոր աշխատանքին արդասիքը բերած հա-  
սուցած էին մինչեւ այդ գերագոյն հանգ-  
րուանը մոռցուած ոսկեղէնիկ յոյսերուն,  
եւ հաղիւ իր մատներովը շօշափած ոսկի-  
ներուն անուշութիւնը, անա անսնք ան-  
յայտ կ'ըլլային յանկարծ՝ խորտակելով  
իր ջիւղերը ու խենդեցնելով զինքը :

Ա՛լ կը հեծէր, սայլին մէջ ծնրագիր՝  
քուրջերու ողորմելի խառնակոյտին վրայ,  
չաքարը կորսնցունող տղու անխորհուրդ  
ու դառն հեծիւնովը, ու մատուրները օր-  
հասական թափառումով կը պտտէին օդին  
մէջ, քուրջերուն վրայ, մազերուն խորը,  
ու կը նայէր, խենդութեամբ, շուրջը, օ-  
դին, շէնքերուն, մարդոյ՝ Յաւին հոգե-  
վարքն էր, մտքին ու ջիւղին ցաւաւանջ  
զալարումը Բայց շուրջերը դուր կը հըծ-  
ծէին .

—Նաբոլէոնէն՝

Ամէն մարդ լուծ էր, ափիբերան, աը-  
նաքին լոկի մնջիկ անաւորութեան լըլ-  
կուած :

Ո՛վ կրնար քանի մը ոսկի նետել սայ-  
լակին մէջ՝ ծերունին կեանքը փրկելու  
համար. ո՛վ պիտի ուզէր այդ պահուն  
նախախնամութիւն մը ըլլալ, հրաշք մը  
գործել . . .

Արեւը իր կրակը կը թափէր փոշոտ ճամ-  
բուն վրայ. գոմէշները կը հեւային՝ սեւ  
վիթխարի փոքրերուն բոլոր թափովը. ու  
եղները՝ որոճալով՝ կը նայէին իրենց տար-  
տամ անուշ նայուածքովը, անդադած հան-  
դիւտեսն ծերունին օրհասին :

Յանկարծ աղաղակ մը որոտաց, ու տե-  
սայ որ գեղացին սկիւռի պէս ցատքելով  
ձեռքին մէկը վեր՝ բան մը կը շարժէր.  
հինգ վեց պանքոթ իրարու մէջ ծալուած :  
Դրամն էր : Գտած էր իր յիշապէս : Ո՛ր-  
կից. ոչ որ հասկցաւ : Ա՛լ հանդարտած,  
գեղջուկը կը կատուեցաւ սայլակին մէջ,  
քուրջերուն վրայ, ու փապարուտ զողջով  
մատներովը բացու թուղթի այդ հմայքոտ  
ծրարը, ու համբուրեց : Երբոր լմնուց,  
շուրջը նայեցաւ. աչքերուն մէջ՝ անպա-  
տում իր շանկութեան անբարբառ խենդու-  
թիւնը խտացուցած : Յետոյ, երկրորդ  
անգամ, աւելի ուշադրութեամբ ու կամաց  
կամայ համբեց, համբեց ու համբեց, ոտքի  
ելլալով, մերթ ծառ, մերթ գլուխը վեր,  
աչքերը մերթ կիսախուփ, մերթ լայնա-  
բաց, ուրախութիւնէն արքիւռ, ա՛լ յաղ-  
թականօրէն ճօճելով պանքոթներու փո-  
քըր ծրարը, ու հիմա գեղջուկան եղանա-  
կի մը հարմարեցնելով իր սա անվերջ ու  
մղձաւանջային բառը .

—Նաբոլէոնէն՝

Ե՛ր ԴՈՒՍԱՆ

## Ի. Տ Է Մ Ի Ր Ճ Ե Ա Ն

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

ՔԵԱՄԷԼ ՓՈՂՈՑ ԹԻՒ 3, ՕԹԷԼ ՇԷՓԸՐՏՍԻ ԴԻՄԱՑ

Երեքարական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ  
ակուայի հիւանդութեանց բուժում : Պատրաստութիւն բնականին յար և  
նման կեղծ ակուաներու, ցանքիներու ոսկիէ, ալիւմինիումէ, ֆաուստէ :  
Ապահով և տոկուն թղթապատ, ոսկի, բլաթին, կայն, կայն : Լինտերու  
հիւանդութեանց դարմանում երեքարական և ուրիշ միջոցներով :



«ՓԱՐՈՍ»-Ի ՅԱՊԱՂՈՒՄԸ

«Փարոս»-ի ներկայ 33րդ. թիւը որ երեքշաբթի օր հրատարակ պիտի ելլէր, ստիպուեցանք այսօր միայն հրատարակել տպարանի փոփոխութեան պատճառաւ, որուն համար հարկ եղաւ երկու օր կորսնցունել:

Մինչեւ այսօր Տիար Թորգոմ փափազեանի տպարանը կը տպուէր մեր թերթը, բայց տպարանապետին Սուէշ մեկնելուն, եւ տպարանը փակուած ըլլալուն համար, ստիպուեցանք տեղափոխուիլ և թերթին տպարանական մասը յանձնել Ս. Գարբիւնեան ծառայութեան պիտի տպուի կանոնաւորապէս ըստ առաջնոյն:

Փափազեանի տպարանը ձգած պահերնու, պարտական կ'ըլլանք մենք զմեզ մեր շնորհակալութիւնները յայտնել Տիար Թորգոմ փափազեանի որ ազնուաբար մեր տրամադրութեան տակ դրած էր իր տպարանը մեր հրատարակութեան օրէն իսկ:

Այս յայտարարութեամբ պատճառ չպիտի ըլլայ սակայն որ մեր բաժանորդները թիւ մը պակաս ստանան: Այս անտեղութեան առաջըք առնելու համար որոշած ենք մեր 34րդ. թիւը հրատարակել վաղը իրիկուն Ուրբաթ և յաջորդ թիւը Կիրակի առաւօտ, այսպէսով դարձեալ ներկայ շաբթուս մէջ 3 թիւ հրատարակած պիտի ըլլանք:

Թաւաղեկայ երեքշաբթի օրէն «Փարոս» նորէն պիտի ստանայ իր սովորական կանոնաւորութիւնը:

Ա Ձ Ք Ա Յ Ի Ն

Հանգուեցաւ Հայր Ալիշանի մահուան գոյժը քաղաքիս մէջ տարածուած վարկեանէն շատ մը երիտասարդներ «Փարոս»-ի խմբագրատունը դիմած են խնդրելով որ իրենց մէկ փափաքին թարգմանը ըլլանք մեր բարեխնամ Առաջնորդ, Գեր. Այվազեան Եպիսկոպոսի մօտ, հոգեհանգստեան պատարագի մը պէտք զգացնել տալու համար Նորին Գերապատուութեան:

Ոմարգրութիւնս կը յարի այդ քաղափարին եւ տարակոյս չունի բնաւ որ Սըրբազան Առաջնորդը պիտի փութայ կատարել հայ երիտասարդութեան այդ փափաքը, որով կարելի պիտի ըլլայ ապա-

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ»-Ի (33)

ԺԸՀԱՆ Տ'ԻՎԷՐԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

Եղիպտական կեանքի մեծագոյն Վէպ

ԳԼՈՒԽ Թ.

Ստանտները, չինական կուռքերու պէս անճկուն եւ թօշ, պուրկոնական իրենց վերարկունները կամ սպանիական իրենց քողերը կը պարզէին՝ լիւքսանպուրի մէկ տակիւնին յիշատակին նման՝ ցեղեր եւ տարազներ օրհնելով խառնուրդին մէջ:

Ու այդ խայտաճանուկ ամբոխին մէջ, այդ տարին նորաձեւութիւն եղող մեծամեծ ֆրոնտէօր դիւարկներու ներքեւ բարձր ի պուր, նայուածքին քովին (kohl) ներքեւ յանգուցն, այտերնին չպարուած եւ չթուրնեցնին ներկուած, քանի մը

ցուցանել թէ՛ մասնակից ենք այդ աղքատին սուգին եւ թէ՛ որքան կը յարգենք յիշատակը այդ մեծ հայրենասէրին, մեծ գրագէտին եւ մեծ մարդուն:

—Ն. Գ. Այվազեան Եպիսկոպոս եւ Ն. Վ. Պօղոս փաշա կիրակի օրունքի ի վեր կը գտնուին Աղեքսանդրիա՝ ու ընտրութեան նախապատրաստական գործողութիւնները սկսած ըլլալու են:

—Երէկ՝ այցելած ըլլալով եկեղեցւոյ չըրջափակին մէջ գտնուող ազգային Մանկապարտէզը, ուրախութեամբ տեսանք որ խիստ վայելուչ եւ ըստ վերջի դրութեան 30 հաս նոր գրասեղաններ չինել տուած են փոքրիկ աշակերտներու գործածութեան համար:

Բարեշրջում մըն է այս որուն համար կը շնորհաւորենք Հոգաբարձութիւնը եւ ազգային իշխանութիւնը եւ կը մաղթենք որ բարեկարգութեան շրջանի մը առաջին եւ վերջին փորձը չըլլայ այս:

—Ներքի՞ է այդքոք դիտել տալ Բարեգործական սրճարանի ընկերութեան թէ՛ պարզապէս տեղի բան է աւելի երկարատեւ ձգել այդ հաստատութեան ճակտին վրայ խոշոր նշանակ մը որ խոշոր սխալով լեցուն է: Societe de Bienfaisance, Societe de Bienfaisance գրեւ բարբարոսութիւն մը է որ քանի մը դահկանով մէջ տեղէն վերցնել քանի մը վայրկեանի կը կարօտի միտք:

Բարեգործական ընկերութիւն մը գոնէ այդ բառին ինչպէս գրուելը գիտնալու է:

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Տիկին Պօղոս փաշա Նուպար եւ իր զաւակները այս օր Աղեքսանդրիա կ'սպասուին Մէսսօքի Բօնիօ շոգեհանաւով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԵՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԷՆ ԳՆՈՒԱՄ ԶԻԵՐ.— Սէն Բեթրապուրկի Սվիէթ Թերթը Անգլիոյ ուսանական ձիերու վերջին գնումին առթիւ կ'ըսէ թէ՛ մինչեւ հիմա 70,000 ուսանական ձի Գաւ ուղարկուած են:

Ռուսական թերթը ուժգնօրէն կը բողոքէ այս արտածութիւններուն դէմ: Ուրիշուր կուտայ կառավարութեան որ՝ դադարեցնել տայ դանտը իբրեւ պատերազմական մաքսանենդութիւն:

Ասկէ ի զատ, կը յայտարարէ թէ՛ մեծ աղբի մը համար բացարձակապէս անհամաձայն բան մընէ մէկ կողմէն արծաթակուռ որուն մը նուրբիլ Տիկին Պօթի նորածինին եւ միւս կողմէն անգլիացիներուն օգնել Պօթիները չարղելու համար:

ՄՈՒԷԺ ՄԱՐՏԱՆԱԻԸ.— Բարեգործութեան գործակալարը զեկոյց Պ. Տէլբասէի թէ՛ իր խնդրանքին համաձայն Գուռը արտոնեց Տարտանիլի մուտքը Մուէթ ֆրանսական պահականաւին:

Կիրախարհիկ կիներ կ'անցնէին, ձանձրացած կերպարանքով, դանկէց կիներու պղերգութիւններն եւ խոնջութիւններն պարտադրելով:

Տակաւին տերեւներով ծածկուած մեծատարած ծառերէն նրբին գողութիւն մը կ'իջնէր: Շատ անուշ կապոյտ երկինքին երեսը դէպ ի հիւսիսի կողմը թեթեւ գնդակներ կը ցանցնուէին, իրեւ թէ վերը, շատ հեռուն, միջոցին մէջ ձիւն տեղացած ըլլար:

ձմեռվայրը չըջապատող ընդարձակ դաշտերը՝ այդ աղւոր օդին շքեղ երեւոյթ փայլուն կանաչ պէրսիմի պաղպաղուն գորգով մը կը ծածկուէին:

Կառքերուն բազմութեանը մէջ, Ժէրմէն բրէնային վերթորոնայով կը պտուղներ իր փոքրիկ աշակերտներէն, իր մեծ սուգէն ի վեր առաջին անգամ ըլլալով մատաղատի ալիքի բացգոյն զգեստ մը հագած էր, դժգոյն մոխրագոյն պարզ զգ-

ԱՆՊԱՆԻՈՅ խոռոկեալ կայութեան պատճառաւ Սուլթանը կայսերական պահակախումբին զօրավար Շաքիր Բեյի Բազիլարի վալի անուանեց, զինուորական կառավարիչ Բիազիմ փաշայի տեղ, որ շնորհանկ ըլլալով Եէմէն զրկուեցաւ, ալպանացի լեռնաբնակ դժգոհ ցեղերը սանձեւու անկարող ըլլալուն համար: Նոր վայրին նոր գործ պիտի ստանայ, կարգապահութիւնը անմիջապէս վերահաստատելու համար:

ԿՐԷՏԷԻ ԱՌԹԻ.— Կրէտէի խնամակալ չորս պետութիւններու ներկայացուցիչներուն միջեւ կատարուած բանակցութիւններէն յուզուած, Սուլթանը հրամայեց իր օտար երկիրներու զննողներուն որ յայտարարութիւններ պահանջեն թէ՛ Կրէտէի մէջ իր ունեցած իրաւունքները ոտնակոխ չպիտի ըլլան: Կոմս Համստոֆ յայտարարած է թէ՛ պետութիւնները մըտադրած չեն Կրէտէի ներկայ քաղաքական վիճակը փոխել:

Կ'ըսէ թէ՛ չորս դաշինքներուն միջեւ փոխանակուած բանակցութիւնները կը վերաբերին բացարձակապէս վարչական խնդիրներու որոնց կարգադրութիւնը անհրաժեշտ էր Եւրոպոս իշխանին պաշտօնավարութեան վերանորոգման առթիւ:

Կը կարծուի թէ՛ միւս պետութիւններն ալ նմանօրինակ պատասխաններ պիտի տան:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ոտովական կառավարման Աստուան կայարանը հասաւ ժամը 4ը 10 անցած:

Ոտովին ը՛դ առաջ եկած էր Սուտանի ընդհանուր կառավարիչ Սրտար Վինկէյթ փաշա: Նորին Բարձրութիւնը բարեկեց Սրտարը որուն հետ քանի մը վայրկեան խօսակցեցաւ. յետոյ, իրեն սովորական աղնուութեամբ, վեհակեղ բարեկեց բոլոր ներկայ գտնուողները անուշ խօսք մը ուղղելով իր բարանչիւրին:

Յետոյ Ոտովը այցելեց Շարաֆի զօրանոցը ուր կը կենար պատուոյ բանակը: Հրետածուութիւն մը տեղի սենեցաւ եւ նուագածուները խորհրդական քայլերգը հնչեցուցին:

Գրօշակներով զարդարուած կայարանէն զուրս ելլելով՝ Ոտովը կառքը նստաւ իր ձախ կողմը ունենալով Սիրտարը, եւ իր ետին, ուրիշ կառքերու մէջ Մաիէի պաշտօնատարները եւ ժողովրդին արձակած կէցցէներուն մէջ Մուտրիէի պաշտաւը գ'աց ուր տեղի ունեցաւ շքեղ ընդունելութիւն մը:

Ժամը հինգին, եգիպտական 10րդ. վաշտին հրամանատարին բնակարանին մէջ, Ոտովը ճաշ մը խուսաւ որուն մասնակցեցան 30 հոգի:

Յետոյ Ոտովը քաղաքէն անցնելով որ շքեղօրէն լուսազարդուած էր եւ դիւղի տեսարան մը կը նմայէր, կայարան գնաց

գետտ մը՝ սեւ մետաքսէ խրացով մը գոցուած, յանգուցն թեղանիքներով, նեղ չըրջապատով որ կը զծագրէր անոր սրբատաշ ձեւերը եւ կուսական շնորհաց նըրբաւարութիւնը:

Ոտովը մաղիւր կ'աներեւութանային լայնատարր ուսման թաղիքէ գլխարկի մը տակ որ ալ աւելի կը ցուցնէր անոր գոյնին վարդաբանգ թափանցկութիւնը եւ դանդաղներուն փաղփուռ ոսկին:

Պաղիկ հանդիմները՝ որո՛ւց աչքին այնչափ երկար ժամանակ գէշ եկած էին աւոր սեւ հագուստները՝ իրենց արեւելեան զուգներուն աւելորդապաշտութեան պատճառաւ, չէին յագեհար դանի զմայլմամբ դիտել եւ իրենց հիացումը կը յայտնէին անոր:

—Ինչ աղւոր էք, օրիորդ, կը մընջէր Յաթիմ, բովանդակ էր թիւնը յափշտակուած, ձեռնամաշ, աչքերը հաստատած իր մեծ բարեկամութիւնը վրայ:

ուսկից ժամը 8 ու կէսին մեկնեցաւ և ժամը 9ին Հէլլաա հասնելով Արիս նաւը մասա իր կցորդով:

Սիրտարը եւ իր հետեւորդները Թանկուր նաւը մասն իսկ մնացեալ պաշտօնեաները թողալով:

Ամեն կողմ մեծ խանդավառութիւն կը տիրէր Ոտովին անցքին վրայ:

—Ձէքի պէյ, Քաաթի Էֆէնտի եւ Սէրբաթ պէյ Ներիտասարգ-Թիւրքերը որ Գահիրէ ապառստնած էին, երէկ Քորֆու մեկնեցան ուր Գաաթի Էֆէնտի մտադիր է հեղափոխական թերթ մը հրատարակել Էլ-Քամուէ-Էլ-Էսաաի անուն:

Իտալիոյ ներքին գործոց նախարարութեան մէջ շրջաբերակներ, Նոյիմբեր 11ին հրապարակուած և արտաքին գործոց նախարարութեան ձեռք Գահիրէի հիւպատոսարանին հաղորդուած՝ կը ծանուցանէ թէ՛ իտալական նաւահանգիստները հանուած մախի բեռ մը հիւպատոսական իշխանութեան կողմէ արուած ծագումն վկայագիր մը կրկնու է նոյնիսկ եթէ այդ բեռը լաւ պաշտաններու մէջ որոշեալ տեղը հասնի:

Պրոստական գետան Պ. Գոկորտան, որ ինչպէս ծանուցած էինք, Վերին Եգիպտոսի մէջ պտույտ մը ընելու գացեր էր, ուրախ օր Գահիրէ հասաւ:

Օրինսդրական Ժողովին Աղեքսանդրիոյ ներկայացուցիչներուն ընտրութիւնները Գահիրէի մէջ տեղի պիտի ունենան, Դեկտեմբեր 14ին:

Հնարեկներու ցուցակներուն վերաքննութեան յանձնաժողովը, կիրակի օր գումարուեցաւ Թաղապետական պաշտօնատան մէջ Աղեքսանդրիոյ կառավարիչ Մահմուտ փաշա Սիւրբիի նախագահութեամբ:

Գրամման բանակէն 420 ենթասպայ եւ զինուոր հրաման ստացան կազմ եւ պատրաստ գտնուիլ Հարաւային Աֆրիկէ մեկնելու յառաջիկայ ամսուն սկիզբը:

Կենդանիներու պաշտպան ընկերութիւնը, խնդրած է Թաղապետութեան որ իրեն սահմանուած տարեկան գումարին վրայ յաւելում մը ըլլայ:

Յունական կառավարութիւնը յառաջիկայ աշնան համար կը կազմակերպէ հնագիտական համազգային վերահաղով մը, որ տեղի պիտի ունենայ Աթէնքի մէջ: Եգիպտական կառավարութիւնը հրաւէր պիտի ստանայ ներկայացուցիչներ ուղարկելու այս վերահաղովին:

Գերձակ բանւորներուն գործադուր միշտ կը շարունակուի, եւ որովհետեւ իրենց պահանջածին եւ գործատէրներուն շնորհիւ ուղածուն մէջ մեծ տարբերութիւն կայ, այնպէս կը թուի թէ՛ աշխատութեան ընդհատումը դեռ երկայն ժամանակ պիտի տեւէ:

Այս կացութիւնը անտանելի է թէ՛ գործատէրներուն եւ թէ՛ գործաւորներուն համար: Բայց անտանելի է նաեւ անոնց

—Ամեն մարդ ձեզի կը նայի կոր, օրիորդ, կ'ըսէր Անկար որ մտատանջի կանխահասութիւն մը ունէր, դատարարական հիւն գեղեցկութեանը մէջ նշմարելով մանաւանդ սքանչալման պատճառ մը որ նայուածքները կը բռնադրուէր եւ չըջազայողներուն ուղադրութեանը իրենց նըպատաւոր ուղղութիւն մը կուտար, մանաւանդ դեռ վրան քիչ մը մնացած հըպարտութեամբ մը՝ որուն առաջը չէր կրցած բողոքովն առնել Ժէրմէն՝ ապա՝ ուր ըլլալով որ ուրիշի մը, այսինքն իրենց դատարարական հիւն ուղղուած այդ հիացումը կը ցայտէր նաեւ իր եւ քորջը վրայ ինչպէս որ խոնարհներուն աղօթքները սուրբերուն միջնորդութեամբ կը բարձրանան մինչեւ Աստուած:

Ու Ժէրմէն կը Ժպտէր, իր սիրած այդ մանուկներուն աչացը գեղեցիկ երեւնալուն երջանիկ, մեղմիւ իմե գոհ այն ներքին ուրախութեամբ՝ զոր ամենէն համեմ



համար, որոնք յառաջիկայ եղանակին համար ապուրած էին ձեռք մը զգեստ կամ ուրիշ հագուստ մը, զոր դեռ կ'ապաստեն եւ որուն դեռ պիտի սպասեն անշուշտ ։

Աստղի այդ ասպետները նորէն ժողով մը գումարանին կիրառի օր «Հազար եւ մէկ զիշերներու» սրահին մէջ, որմէ յետոյ խափոր մը կազմելով քաղաքին փողոցներուն մէջ ցոյց մը ըրին ։

Դիւժակ վարպետները երէկ զիշեր ժողովուրդին, վճարական խորհրդակցութիւն մը ընկու համար ։

Արդէն ութ դերձակ-վարպետներ եւ վեց հանգերձեղինաց վաճառատուներ ընդունած են նոր պայմանները ։

Երէկ նորէն ժողով կար «Հազար եւ մէկ զիշերներու» սրահին մէջ ։ Իրիկուան դէմ, գործաւորները նորէն ցոյց մը ըրին Մուսթի մէջ եւ տեղեկացած ըլլալով թէ Ա լա պիլ ժառանգիւն վաճառատան միջ գաղտնի կերպով արապ գործաւորներ թանկանալու կուտան, քանի մը հոգի բռնի կերպով ներս մտան այդ խանութէն եւ կը դուրս հարուածներով դուրս հանեցին այդ ըմբոստ արեւստակիցները ։

Այդ չփորձութեան միջոցին, կըսուի թէ գործաւոր մը ինքզինքը վար նետած է լա պիլ ժառանգիւնի երկրորդ յարկի պատուհանէն ։

Հեծեալ ոստիկաններ միշտ կը հսկեն քաղքին անդորրութեան եւ չէզոքաբար կը հետեւին գործաթողերու խուժերուն ։

Երկուշաբթի Անգլիոյ Ալէքսանտրա թագուհոյն ծննդեան 57րդ տարեդարձին առթիւ թնդանթի 21 հարուած արձակուեցաւ միջնաբերդէն եւ բոլոր հիւպատոսարանները իրենց դրօշակը պարզեցին ։

Բրիտանական վեհապետութեան Ատիւ-Ատիպի ներկայացուցիչ Տեղակալ-Գնացապետ Հարրիսթընը երէկ Հռոմէն քաղաքը հասաւ եւ վաղը Սուէզի ճամբով պիտի մեկնի իր պաշտօնատեղի ։

Սուլթանը Շէֆաքաթ պատուանշանին Բ. աստիճանը շնորհած է Գահիրէի ռուսական հիւպատոսին կնոջ Տիկին Շէպօյինի եւ Աղեքսանդրիոյ հիւպատոսին կնոջ Տիկին Իվանովի ։

Ստիվական աշխարհագրական ընկերութեան բացման նիստին մէջ որ տեղի ունեցաւ չաքաթ օր, Բրէնս Իպրահիմ Հասան, խիստ չափական բանախօսութիւն մը ըրաւ իր աշխարհիս շուրջը ըրած ճամբորդութեան վրայ ։ Ունկնդիրներու ընտելեալ բազմութեան մէջ նշմարեցինք Ֆիսարի փաշա, Շաղուպ Արթին փաշա, Պողոս փաշա Նուպար, Քրուկչէնք փաշա, Պ. Շվէյնֆուրթ, Գոմանոս փաշա, Տիար եւ Տիկին Պէլինֆանթ Օթմպէրկ, Բրէնս Ազլով Պէյ Հասան, մեր պաշտօնակիցներու շատերը, ինչպէս նաեւ Գահիրէի բարձր դասուն պատկանող անձնաւորութիւններ իրենց կիներովը միասին ։ Բացման ճառը արտասանեց ընկերութեան նախագահը Ապաթէ փաշա ։

սին անգամ կը պատճառէ ինքզինքը աղուոր եւ ուշագրաւ զգալու համոզումը ։

Երբ կառքը երրորդ անգամ ըլլալով ծառերէն վեր կ'երթար, փոքրիկ Ֆաթման ճիչ մը արձակեց ։

— Պապան նայեցէ՛ք... կը տեսնէ՞ք ինչպէս մեզի կը նայի կոր, օրիորդ ։

— Փաշան չէ՞ս կրնար ըսել, ըսաւ յանդիմանութեամբ անդրանիկը որ շատ փափկանկատ էր թրքական կարգուսարքի խնդիրներու մասին, որ բացարձակապէս կը մերժէ զաւկին սէրը եւ գործուրանքները՝ յօգուտ պատկառանքի եւ երկրորդի ։

— Ո՛ւր է, չեմ տեսներ, հարցուց ժէրմէն որուն երեսը կարմրեցաւ ։

— Ահա, օրիորդ, մեր առջեւ, կը բարեւէ կոր ։

Արդարեւ Մուրաան էր, ինքն իր ձեռքովը կառքը վարելով. Եւրոպայէն նոր եկած նոր փայետոնի բարձրութեանէն միւս կողմերուն ամբողին վրայ իշխելով,

— Հելլենական դիւանագիտական գործակալութեան պաշտօնատուներ նախկին տեղէն փոխադրուեցաւ Իսմայիլիէ թաղը, Սուարէսի շէնքին մէջ Ռիզօթթօ Բիւլպին ճիչ մը տակը ։

— Աղեքսանդրիոյ մէջ կառուցուելիք արհեստական վարժարանին շինութեան համար թացուած հանդանակութեան գումարը մինչեւ երէկ 2,942 ոսկի կը հասնէր ։

— Եթէ երբէք ստույգ են մեր առած տեղեկութիւնները, Ներքին Գործոց նախարարութիւնը որոշած է բոլոր թերթերու խմբագիրներուն տալ մասնաւորաբար եր, ամեն հանդէսներու, եւ պաշտօնական հաւաքումներու մէջ ազատորէն կարենալ մտնելու համար ։

— Ն. Բ. Ռաիվը Պոլիս գտնուած միջոցին Սալիսէի աստիճանը շնորհած է Ստիվական շոգեհաւային ընկերութեան Կ. Պոլսոյ գործակալութեան պաշտօնականներէն Տիար Արտայէն Կէօնեանի ։

— Կ'ըսուի թէ եգիպտական կառավարութիւնը համաձայնած ըլլալով օտար տէրութեանց հիւպատոսներու հետ, խիստ միջոցներ ձեռք պիտի առնէ գոցելու համար այն ամեն խաղաղուները որ Գահիրէի մէջ կը վխտան ։

## ՀԵՌԱԳԻՐԿԵՐ

Ս. ԲԵԹՐՍՊՈՒՐԿ, 30 Նոյ. — Ձարը Ալէքսանդր Նէվսքի պատուանշանը շնորհեց, Իթօ մարքիզին ։ Ժաքոնացի պատուիրակը Ս. Բէթրսպուրկ հասնելուն ընդունուեցաւ Արաւաթին Գործոց նախարարութիւնը ներկայացնող պաշտօնատարներու կողմէ, ինչ որ բացառիկ պատիւ մըն է որ կըլլուի իրեն ։ Ընդունուածութեան այս եղանակը շատ փաղաքուշ կը նկատուի ։ Կը գրուցուի թէ՛ Ժաքոնի կողմէ եղած ընդդիմութեան հետեւանօք, Մանչուրիոյ մասին Ձիւստատանի հետ սխառած բանակցութիւնները ընդհատուած են ։ (Ռ)

ԳԵԲԹԱՌԻՆ, 30 Նոյ. — Պաշտօնապէս կը ծանուցուի թէ՛ այսուհետեւ ոչ ոքի թող պիտի տրուի մտնել ի Նաթալ կամ Բէթի գաղթականութեան մէջ, առանց մասնաւոր արտօնութեան ։ Ով որ այս արտօնութիւնը կը խնդրէ պէտք է հաստատէ թէ՛ ի վիճակի է ապրուստը հայթայթելու, թէ իր ճամբորդութիւնը որեւէ եպիքի նպատակ չունի, եւ թէ տարագիր մը չէ ։ (Ռ)

ԼՈՆՏՈՆ, 30 Նոյ. — Թէքսի դուքս որ սորդութեան միջոցին, ձիէն ինկաւ, չըրթ ներուն վրայ ստացած մէկ վերքէն եւ ուղեղի ցնցումէ կը տառապի ։ (Ռ)

ԼԱՀԷ, 30 Նոյ. — Կ'ըսուի թէ՛ անհամաձայնութիւնը երթալով կը սաստկա-

կ'անցնէր ժպիտներ ու ողոյսներ սփռելով, ամենուրեւ ուշագրութիւնը բռնի յանկուցանելով իր կեցուածքին ազնուական ու սիրուն վեհութեամբը եւ անդրուարին պերճանքովը ։

Այս պահուս հակառակ կողմէն կուգար շքեղ լանսօ մը, որուն խորը կ'երեւէին շատ պարզ միջագոյն զգեստներ հագած երկու կիներ. միակ բանը որ այնչափ ուրիշ կիներու մէջ անշնչմարելի անցնելէ կ'արգիլէր զիրենք, երկուստարագունին, — որ անտարակոյս միւսին աղջիկն էր — գոյնը եւ մազերն էին. Կափազանց տրժգունութիւնէն գրեթէ արձաթափայլ անզուգական խարտեղութեամբ մազեր, եւ կապարանկարի ջնջուած երանգներով պաղպաղուն սպիտակութեամբ մորթի գոյն մը ։

Բրէնսը այդ տիկիններուն դէմէն անցնելու ատենը շատ խոնարհութեամբ բարեւեց, աւելի մոտեմական ժպիտ մը ու-

նայ ինքուհւոյն եւ իր ամուսնոյն միջեւ որ Գերմանիա մեկնեցաւ ։ Նոյն իսկ կ'ըսուի թէ՛ թագուհւոյն զաւակ անցնելը հետեւանք է ընտանեկան բուռն կռիւի մը ։ Ամաթէրտամի մէջ սինէմաթոկրաֆի ներկայացման մը միջոցին թագուհւոյն պատկերը ծափահարուեցաւ, մինչդեռ էրկանը պատկերը հա՛յհո՛ւհներու տեղի տուաւ ։ (Ռ)

Ս. ԲԵԹՐՍՊՈՒՐԿ, 30 Նոյ. — Կը հաստատուի այն լուրը թէ՛ Մանչուրիոյ մասին եղած բանակցութիւնները ընդհատուած են ։

Լամսորթ կոման եւ Պ. ալ վիթ իթօ մարքիզին հետ ճաչեցին ։ (Ռ)

ՀՌՈՄ, 30 Նոյ. — Կառավարական պիւտձէն հրատարակուեցաւ ։ Նախընթաց տարեշրջանին մէջ ծախսերէ աւելցած 41 միլիոն ֆրանքի գումար մը գոյացած է ։ Այս տարուան համար կը կարծուի թէ՛ այս աւելցուելը 13 միլիոնի պիտի բարձրանայ եւ եկող տարի 14ի ։ Եւրոպայի նախարար իր տեղեկագիրը վերջացնելէ առաջ կը յայտարարէ թէ՛ երկրին տնտեսական վիճակը բարելաւութեան շրջանի մը մէջ մտած է եւ կը յաւելու թէ՛ ներքին մաքսատուրքի դրութիւնը բարեփոխուած է ։ (Ռ)

ՄԱՏՐԻՏ, 30 Նոյ. — Պ. Բի Մարիալա մեռաւ ։ Տէ գ'Ասթիւրիի իշխանուհին մանչ զաւակ մը ունեցաւ ։ (Հ)

ՀՌՈՄ, 30 Նոյ. — Պ. Պրօքթօ խորհրդարանին մէջ կարգաց 1901ի տեղեկագիրը որմէ կը տեսնուի թէ՛ 1900 տարեշրջանէն 41 միլիոն ֆրանք աւելցած է եւ թէ երկրին տնտեսական վիճակը սքանչելի է ։

ԼՈՆՏՈՆ, 1 Դեկտ. — Սըր Ռեյնոլդ Պիւլէր, Տըվինիաներու հացկերոյթին ջերմապէս ծափահարուեցաւ ։ Ծնորհակալութիւն յայտնելէ ետքը իրեն եղած այդ համակրալի ընդունելութեան համար, ըսաւ թէ օրինապահութիւնը կարգիլէ իրեն վերջին եղելութեանց վրայ ակնարկութիւններ ընել ։

Այս օր կէսօրէն յետոյ Հայտ Բարքի մէջ զօրավար Պիւլէրի ի պատիւ համակրական ցոյց մը տեղի ունեցաւ ։ Որեւէ անկարգութիւն չի պատահեցաւ ։ Արհեստաւորներու ընկերութիւնները թափօր կազմած եւ նուազածութեամբ մասնակցեցան այդ ցոյցին ։ (Ռ)

ՊԵՐԼԻՆ, 1 Դեկտ. — Ընկերվարականներու զրդմամբ պատրաստուած հանրագրութիւնը որ կը բողոքէ մաքսային նոր սակագոյցերու դէմ, 3 միլիոն ստորագրութիւն կը կրէ ։

Ռայսթապիկ մէջ փոթորկալից նիստի մը կ'սպասուի, բայց հաւանականաբար սակագիրը պիտի ընդունուի ։ (Ռ)

ԲՐԷԹՈՐԻՆ, 1 Դեկտ. — Նախկին Հանրապետութեան կողմէ տրուած ինչ ինչ օրէնքներ ջնջուեցաւ, որովհետեւ չեն

նեցաւ, ու ժէրմէն որ զայն կը զիտէր կարծես ատկէ վիշտ մը զգաց, ցաւազին զգացում մը որ անհուն տխրութեամբ մը լեցուց զինքը ։

Բայց Անկար կը ճանչնար լանսոյն տիկինները ։

— Ծուռետացի իշխանուհին'նրն են... հարկաւ գիտէք, օրիորդ, արդէն անգամ մը եկան պալատը, փաշան ալ Նիու — հօթէլը ճաչեց անոնց բնակարանը ։

Ժէրմէն կը յիշէր, Սթա Ապուհա անոնց խօսքը ըրած էր իրեն. աղջիկը քսան տարեկան խեղճ երիտասարդուհի, կուրծքի հիւսնաւորութիւն ունէր. իր երկրին բըժիշկները Գահիրէ կը զրկէին զանի, նախամեծար համարելով ահաւոր ժամուն հեռացած գիտնալ զանի, ու երեք ձմեռէ ի վեր՝ մայրը պատած էր հարաւային եւրոպան, Իտալիա, Յունաստան, Ալճէրիա, ու Եգիպտոս կը վերադառնար, արդէն հոն առաջին ճամբորդութիւն մը ըրած

համապատասխան իրաց արդի վիճակին ։ Պիօ հառաքները արգելք եղան որ Պօէրներ ի կատար հանեն ամսոյս 28ին, Թրանսլալի երկաթուղին կարել անցնելու նպատակին ։ Ետ մղուած թշնամի բանակը, ըստ երեւոյթին, խիստ վեհաւուած ըլլալու է ։ (Ռ)

Ս. ԲԵԹՐՍՊՈՒՐԿ, 1 Դեկտ. — Իթօ մարքիզը քանի մը ժամանակ հոս պիտի մնայ ։ Իշխանութիւնները եւ մամուլը շատ զոհ մնացած են այս այցելութեանէն որ զրաւական մըն է ճաքոնի մասին Ռուսիոյ տածած բարեկամեցութեան, զգացումներուն եւ որ երկու երկիրներու մէջ մերցեցում մը յառաջ պիտի բերէ ։ (Ռ)

ԲԱՐԻՉ, 1 Դեկտ. — Լրագիրներու ըսածին համեմատ Հիւստի մէջ գտնուող թուրք զինուորները ամսական առած չըլլալուն համար ապստամբած են ։ Զիտէի մեծ սըղկիթը ապստամբներու կողմէ գրաւուած է ։ Մէքքէի մէջ արիւնահեղութիւններ պատահած են ։ (Հ)

## ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ-ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՏԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէն եւ շրջականներէն կ'ընդունուին Պոլիս, վեհապետիկ և արտասահմանի ուրիշ կ'ըրոններ գտնուած ամեն տեսակ զէրքերու, ինչպէս նաեւ Համպուրկի, Պրոնշալիկի վիճակահանութեանց տոմսակներու, Եգիպտական Քրէտի Ֆոնսիէի, Ռուսիայի երկաթուղոյն բրոմէսներու, և գարձեալ ամսավճարներով արժէթովեր ձեռք բերելու յանձնարարութիւններ և այլն ։

Արժէթովերու, վիճակահանութեանց վերաբերեալ ապաւորանքներ ըլլալու են կանխիկ փոսթի միջոցաւ ։ Գիրքերու համար կարելի է նախապէս կէսը զրկել և մնացեալը գօթորոշում պատրաստելով վճարել այն պահուն, երբ յանձնարարուածները զրկուին իրենց հասցէներուն ։

Մինչեւ 20 զրշ. արժէքով յանձնարարութիւններու համար Եգիպտ. 5 միլիմնոց գործմամբովեր կ'ընդունուին ։

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի և այլն ծախսեր միշտ յանձնարողներուն կը պատկանի ։ Հասցէ՝

Garabed Erzenatzian  
Rue Abul-Aziz  
CAIRE

ըլլալէ վերջը, յորում հիւանդին վրայ քիչ մը ուժ եկած էր կարծես, այդ անձանթ երկիրներուն մէջ քաշկռտելով անբուժելի տխրութիւն մը, կորուստին վիշտը այն զեղեցկութեանց զոր կիսով միայն ընդնշմարած էր, որոնց վրայ արագ արագ նայած էր եւ զոր ալ յաւիտեան չպիտի տեսնէր վերստին. իսկ ամեն բանէ աւելի, հայրենաւարդութիւնը ունենալով իր լեռներուն, սէրը անոր ձմեռներուն, այն սառոյցին որուն վրայ կը չմկեն, այն ձիւնին որուն անարատ սպիտակութիւնները յափշտակած էին իր մանկակահա՛ն աչքերը եւ որ զինքը կը սպաննէր ։

(Շարունակելի) Թարգ. Յ. Սեթեւան



# Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ց

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՅԱՆ 1893 ՎՍ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻՄ.Ո. 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՁԲԱՆԲ

Ապահովագրական ամեն կարելի դուրսբերելու կը զո ծաղրէ. խառնապահովագրութիւն, ամբողջ կեանք, գաւազնագրամագրութիւն, ցմառ եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱՆ ԼԱՅՑԻ սակագինը և ապահովագրութեան զանազան գործիքները չունենաւիրած մի ապահովագրութիւն. — Առատաձեռն պայմաններ  
Տեղեկութեանց համար գիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ՔԻՐՉԻՍ և Ժ. ՎԱԼԵՆԻՆ, Ընդհ. ներկայացուցիչք:  
Աղէքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, քիմիաւոր գործակալուտար Գ. ԵԿԱՒՈՑ ԴԵՐ-ԴՈՐԺԱԿԱՆ Ի Գահիրէ

### ԳՐԵՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԳՐԱՄԱԴԼԻԻ 200,000,000 ՁԲԱՆԲ  
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ 8 ԵԳԻՊՏՈՍ  
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԵՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Ձեռնային և օտար երկիրներու վրայ կ'աւտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը գանձէ եգիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ ձգուած գրամներուն փոխարէն կ'անխորշ պայմանաժամով մուծակներ կ'աւտայ:

### ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

#### ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԿԻՈՅ ԳԻՄ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿԵՆՈՒՄ. — Ամեն շտաբը իր օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիւրէ, Խալիք, Մի. ախլի և Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միևնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղէքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաները Բի. րէա հանդիպելուն, Աղէքս. այցելել:

ՄՈՒՐԻՈՅ ԳԻՄ.

ՄԵԿԵՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոն-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէր. սին և Իսկէնտէրուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միևնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղէքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 6ին:

Ճամբորդները օրը անգամ մը՝ երթեկեկամբ Դիւն Կանդիպելուն, Աղէքս. այցելել:

ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ ՆԱՎԱՀԱՆԳԻՄՆԵՐՈՒ ՄԻՋԵԻ.

ՃԻՏՏԷ, ՍՈՒԱՔԻՆ, ՀՕՏԷՑՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանց համար գիմել ընկերութեան Աղէք. ուսնորիոյ, Բոն-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գիւլի ամեն մասնաճիւղերուն:

1--1902

### ՏՕՔ. Ս. ԹԱՀՄԻՉՕՅ

Փորձառու բժիշկ արդէն Պոլսոյ և փոքր-Ասիոյ կողմերը տարիներով իւր արհեստը ի գործ դրած և յետոյ Բարեզի հիւանդանոցներուն մէջ ներքին հիւանդութեան իր մասնագիտութիւնը կատարելագործած ըլլալով, վերջերս ժամանակ մը Սօֆիայի կեդրոնական հիւանդանոցին մէջ ծառայելէ ետքը այս անգամ եկած է հաստատուել ի Գահիրէ:

Առ ժամապէս կը գտնուի ի Զէյթուն, և իր տունը կ'ընդունի իրեն գիմել հիւանդները, առաւօտեան ժամը 10—12, և կէս օրէն յետոյ 3էն 5 Պ. Տրիպոլի գեղարանը յէջպէքելէ, Գահիրէ:

Երեքշաբթի և շաբաթ օրերը աղքատները չ'ըր կը դարմանուին:

### ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՇԵԱՆ

—X—

ՎԱՀԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՑԻ ԵՒ ԳՈՀԱՐԵԼԻՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, Մոնսի փողոց,

Ս. և Ս. Սիւնատի վաճառատան դէմք

Ապրանայ զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական

Շօնօկրաքներու

Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրաստորութեան տակ կը գտնուի:

ԱՅՑԵԼԵՑԷ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ

### Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի մէջ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՈՅԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւորով

|                                  |                               |
|----------------------------------|-------------------------------|
| ԱՆԱՐԸՐԷՐ ՆԻՔՕԼԱ. տրղթ. թօն. 5500 | 2ԻՍԱՉՈՅ տարողութիւն թօնօ 5500 |
| ԲԷՆ ՕԼԿԱ                         | " " 5500 2ՍՐ " " 5500         |

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղէքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ՕՏԷՍ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐ. ՍԻՆ, ՔԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐ. ՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԳԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ Աղէքսանդրիա, Բիւրասան փողոց:

### ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խորվական Հրամանագրով  
23 Յունվար 1898

Դրամագլխիս Անգլ. սակի 1,500,000  
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ Սըր Էլլին Բալմէր.

Ընդ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր.

Աղէքսանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի առանձին, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

### ԴԺՈՒՄԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է ամեն հաշէ վերջ ՐԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն աղքատ գեղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ տարի ալբուլային գեղերու նման չի խանդարեր ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

## Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

### ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍՔԻ

ՎԱՀԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ, ԳՈՀԱՐԵԼԻՆԱՅ ԵՒ ՖՕՆՕԿՐԱՑՆԵՐՈՒ